


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. փետրվարին /վերլուծություն/


2003թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 4524 գործարքներ, որոնք 2002թ. փետրվարի համեմատ աճել են 37.6%-ով, իսկ 2003թ հունվարի համեմատ՝ 32.8%-ով:

2003թ. փետրվարին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների



ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2134 օտարման գործարքների 91.3%-ը կազմել են առուվաճառքները, 8.1%-ը նվիրատվությունները և 0.6%-ը

փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 43.7%-ն արձանագրվել են Երևան քաղաքում, որի 66.8%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. փետրվարին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 44.3%-ով, իսկ 2003թ. հունվարի համեմատ՝ 24.5%-ով: 2003թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի 857 առուվաճառքի գործարքների 66.6%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 31.9%-ով, իսկ 2002թ. փետրվարի համեմատ՝ 7.5%-ով:

2003թ. փետրվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. փետրվարին համարժեք է 586.5դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		փետրվար 2003թ.	հունվար 2003թ.	փետրվար 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	355.8	336.9	255.1
Արաբկիր	150.0-550.0	246.5	232.2	145.9
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	141.2	133.6	93.2
Նոր-Նորք	90.0-240.0	122.5	116.8	87.9
Ավան	90.0-190.0	112.3	107.5	81.3
Էրեբունի	90.0-300.0	127.5	122.0	84.4
Շենգավիթ	80.0-250.0	125.0	121.5	85.7
Դավթաշեն	100.0-250.0	136.9	131.2	84.3
Աջափնյակ	80.0-220.0	121.5	116.9	84.6
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	122.6	118.0	85.1
Նուբարաշեն	50.0-100.0	56.8	48.2	38.1
Երևան	50.0-970.0	151.7	144.1	102.3

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

2003թ. փետրվարին Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 5.3%, իսկ տարեկան աճը՝ 48.3%: Վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական գների աճման միտումը դեռևս շարունակվում է:

2003թ. փետրվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 344 բնակարաններ: 2003թ. փետրվարին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և

ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			փետրվար 2003թ.	հունվար 2003թ.	փետրվար 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-90.0	61.2	60.2	55.4
	Ապարան	18.0-50.0	26.8	26.7	24.2
	Թալին	18.0-50.0	23.5	22.5	19.5
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	52.8	51.8	50.3
	Մասիս	20.0-90.0	53.6	53.3	47.6
	Վեդի	20.0-55.0	30.0	29.1	27.3
	Արարատ	22.0-50.0	31.0	29.9	25.2
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	77.4	69.6	65.5
	Արմավիր	21.0-68.0	42.9	40.9	38.7
	Մեծամոր	17.0-50.0	30.4	30.0	27.9
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.2	30.0	27.9
	Գավառ	20.0-55.0	29.3	29.2	28.3
	Մարտունի	18.0-58.0	28.5	27.2	27.2
	Վարդենիս	10.0-41.0	16.8	16.4	15.7
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	59.5	59.1	56.0
	Ստեփանավան	20.0-58.0	30.0	29.5	28.5
	Սյիտակ	17.0-40.0	23.1	20.8	19.5
	Ալավերդի	15.0-40.0	24.7	24.3	22.2
	Տաշիր	15.0-28.0	18.5	18.3	16.0
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	80.0	70.0	62.9
	Լոր Հաճն	35.0-85.0	50.4	48.5	42.8
	Բյուրեղավան	15.0-55.0	34.6	34.3	33.5
	Եղվարդ	28.0-65.0	39.4	39.0	35.5
	Հրազդան	18.0-55.0	29.4	29.0	25.9
	Ծաղկաձոր	22.0-100.0	74.1	72.5	65.8
	Չարենցավան	13.0-55.0	30.1	29.6	29.6
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	63.5	63.1	54.2
	Արթիկ	17.0-55.0	24.6	24.4	22.7
	Մարալիկ	15.0-43.0	22.8	22.3	20.1
Սյունիք	Գորիս	21.0-55.0	28.3	27.8	26.8
	Կապան	18.0-42.0	27.8	26.7	24.1
	Միսիան	17.0-47.0	26.9	26.4	23.2
	Քաջարան	13.0-30.0	17.1	17.0	14.8
Վայոց Ձոր	Վայք	15.0-58.0	34.3	32.4	25.2
	Եղեգնաձոր	20.0-68.0	46.5	46.1	38.0
	Ջերմուկ	18.0-55.0	39.2	38.9	36.5
	Դիլիջան	15.0-54.0	35.8	33.9	31.9
	Իջևան	23.0-50.0	39.7	39.6	33.9
	Բերդ	15.0-43.0	28.0	27.9	26.5

2003թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանի, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների ամսական միջին աճը կազմել է 3.1%, իսկ տարեկան միջին աճը՝ 11.3%:

2003թ. փետրվարին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 316 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 69, մյուս մարզերում միասին վերցրած՝ 247: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 67.2%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 38.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 77.7%-ով: 2003թ. հունվարի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 29.5%-ով, ընդ որում Երևանում՝ 9.5%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ 36.5%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. փետրվարին անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		փետրվար 2003թ.	հունվար 2003թ.	փետրվար 2002թ.
Կենտրոն	210.0-990.0	358.0	340.0	259.0
Արաբկիր	160.0-580.0	249.0	235.0	146.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	143.0	136.0	93.0
Նորք-Մարաշ	185.0-640.0	278.0	275.0	203.0
Ավան	95.0-200.0	114.0	109.0	85.0
Էրեբունի	95.0-320.0	129.0	124.0	97.0
Շենգավիթ	85.0-260.0	127.0	123.0	91.0
Դավթաշեն	105.0-260.0	138.0	133.0	88.0
Աջափնյակ	85.0-230.0	123.0	118.0	85.0
Մալաթիա-Մեքաստիա	95.0-250.0	124.0	120.0	88.0
Նուբարաշեն	55.0-110.0	57.0	50.0	39.0
Միջինը Երևանում	55.0-990.0	167.3	160.3	115.8

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2003թ. փետրվարին, Երևանում անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական միջին աճը կազմել է 4.3%, իսկ տարեկան միջին աճը 44.4%: Վերլուծության արդյունքում կարելի է կանխատեսել, որ Երևանում անհատական բնակելի տների շուկայական գների աճման միտումը դեռևս կպահպանվի:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			փետրվար 2003թ.	հունվար 2003թ.	փետրվար 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-103.0	80.8	79.8	72.4
	Ապարան	20.0-45.0	37.3	36.5	33.2
	Թալին	15.0-33.0	27.2	26.7	21.7
Արարատ	Արտաշատ	28.0-75.0	60.6	60.2	55.2
	Մասիս	27.0-75.0	60.7	59.9	59.3
	Վեդի	25.0-58.0	35.3	34.7	33.4
	Արարատ	25.0-60.0	35.4	34.0	32.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-105.0	78.2	69.6	60.7
	Արմավիր	35.0-90.0	50.0	48.4	45.3
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	35.7	35.3	32.5
	Գավառ	25.0-65.0	38.7	38.3	35.2
	Մարտունի	20.0-60.0	33.1	32.5	30.6
	Վարդենիս	15.0-39.0	19.9	19.7	18.5
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	66.6	64.6	60.0
	Ստեփանավան	20.0-50.0	31.7	31.5	30.0
	Մայիտակ	17.0-50.0	23.8	24.0	22.3
	Ալավերդի	18.0-48.0	25.9	25.9	20.5
	Տաշիր	15.0-35.0	19.1	18.8	17.0
Կոտայք	Արմյան	40.0-100.0	90.2	88.8	84.5
	Նոր Հաճն	35.0-80.0	53.0	52.6	50.0
	Բյուրեղավան	15.0-50.0	36.4	36.2	34.3
	Եղվարդ	23.0-65.0	45.9	44.9	39.6
	Հրազդան	25.0-60.0	38.7	38.0	34.2
	Ծաղկաձոր	45.0-100.0	84.1	82.6	75.4
	Չարենցավան	25.0-50.0	32.4	34.0	30.5
Շիրակ	Գյումրի	40.0-105.0	87.0	85.7	74.9
	Արթիկ	18.0-60.0	26.8	26.0	25.0
	Մարալիկ	15.0-55.0	23.4	22.8	20.0
Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.6	30.3	26.7
	Կապան	25.0-55.0	29.1	28.7	25.1
	Միսիան	18.0-50.0	27.4	26.7	24.3
	Քաջարան	15.0-30.0	18.1	17.8	16.0
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	35.6	34.6	28.7
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.0	47.1	40.5
	Ջերմուկ	25.0-60.0	41.8	41.2	41.3
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.4	37.7	34.5
	Իջևան	30.0-70.0	39.9	39.5	36.9
	Բերդ	20.0-50.0	30.1	29.6	29.1

2003թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.0%, իսկ տարեկան միջին աճը՝ 11.4%:

2003թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են հողերի 511 օտարման գործարքներ /173.76 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 7.93հա/: Հողերի 278 օտարման գործարքներն /150.23հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 484-ը հանդիսացել են առուվաճառքի և 27-ը՝ նվիրատվության գործարքներ: Առուվաճառքի 19 գործարքներում /3.9%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձիք:

2003թ. փետրվարին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 2.5 անգամ, իսկ 2003թ. հունվարի համեմատ՝ 18.6%-ով: Ընդ որում, 2003թ. փետրվարին հողերի առուվաճառքներից 119-ն իրականացվել են աճուրդների միջոցով պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ, որտեղ 64 /9-ը՝ 0.36հա Երևանում/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ են, 53-ը /11.83 հա/՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ 2-ը՝ հասարակական կառուցապատման հողեր:

Ստորև ներկայացվել է 2003թ. փետրվարին մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքների գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր				գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր				բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	16	1.34	26	3.46	0	0.00	41	2.39	5	0.40
Արագածոտն	53	11.83	0	0.00	0	0.00	19	14.25	6	0.97	0	0.00
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	97	34.05	21	1.65	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	19	12.59	8	0.70	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	16	22.50	8	0.83	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	9	4.66	2	0.54	0	0.00
Կոտայք	0	0.00	55	5.32	0	0.00	37	6.30	17	2.60	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	10	13.75	2	0.05	1	0.04
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.10	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	9	27.71	1	0.12	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ընդամենը	53	11.83	71	6.66	26	3.46	216	135.81	107	9.95	6	0.44

2003թ. փետրվարին հանրապետությունում վաճառվել է 2 միավոր արդյունաբերական օբյեկտների հողեր Երևանում՝ 0.04 հա /Էրեբունի համայնք/: 2003թ. փետրվարին Երևանում գրանցվել են վարձակալության իրավունքի վաճառքի 3 գործարքներ

2003թ. փետրվարին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 269, այդ թվում աճուրդ-վաճառքների 53 գործարքներ, որոնց պայմանագրային միջին գների վերլուծությունների արդյունքները, 1 հա մակերեսի հաշվարկով, ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի անվանումը /նախկին շրջան/	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	53	11.83	636.0	1960.0	1348.0	9	3.21	1028.0	7300.0	2300.0
Ապարան						5	1.41	130.0	500.0	340.0
Թալին						4	4.63	200.0	1680.0	340.0
Ծաղկահովիտ						1	5.00	245.0	330.0	290.0
Արարատի մարզ										
Մասիս						6	2.25	730.0	3000.0	1000.0
Վեդի						50	20.95	710.0	7150.0	1100.0
Արտաշատ						41	10.85	1040.0	6000.0	2200.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						7	5.41	980.0	9200.0	2000.0
Արմավիր						9	5.45	670.0	4600.0	1260.0
Բաղրամյան						3	1.73	130.0	1000.0	365.0
Գեղարքունիքի մարզ										
Վարդենիս						16	22.5	90.0	1180.0	200.0
Լոռու մարզ										
Գուգարք						3	1.18	500.0	6000.0	1020.0
Տաշիր						6	3.49	50.0	400.0	250.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						25	3.77	520.0	10000.0	3490.0
Եղվարդ						12	2.52	660.0	6000.0	1920.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	8.16	550.0	750.0	620.0
Ամասիա						3	5.59	80.0	250.0	210.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	7.71	370.0	3700.0	830.0
Վայք						6	20.0	120.0	3400.0	380.0

2003թ. փետրվարին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի 122 առուվաճառքների գործարքներ (որից աճուրդ-վաճառքների 55 գործարքներ): Առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված շուկայական գները, 1000.0քմ մակերեսի հաշվարկով, ներկայացվում են ստորև

Տարածաշրջանի (նախկին շրջանի) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						5	7540.0	120.0	3800.0	2290.0
Ապարան						1	2190.0	120.0	670.0	310.0

Թային								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Մասիս						11	7610,0	280.0	3680.0	845.0
Վեդի						3	2400,0	120.0	1000.0	500.0
Արտաշատ						7	6470,0	180.0	2460.0	655.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						4	2400,0	280.0	3700.0	1330.0
Արմավիր						4	4640,0	180.0	2440.0	700.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի						2	2210,0	120.0	320.0	220.0
Գավառ						5	5730,0	180.0	1000.0	520.0
Սևան								120.0	280.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ						1	400,0	78.0	180.0	140.0
Լոռու մարզ										
Ստեփանավա								78.0	340.0	140.0
Գուգարք						1	400,0	78.0	3800.0	580.0
Սպիտակ								120.0	450.0	160.0
Ալավերդի						1	5000,0	78.0	440.0	200.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	1800.0	95.0	120.0	110.0	11	21378.0	180.0	4300.0	1580.0
Եղվարդ	53	51400.0	71.0	294.0	114.0	3	2410.0	180.0	2670.0	2080.0
Հրազդան						3	2200.0	180.0	4120.0	1330.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	530,0	120.0	2500.0	450.0
Անի								120.0	430.0	190.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Ամասիա								78.0	180.0	130.0
Սյունիքի մարզ										
Սիսիան						1	1000,0	78.0	450.0	230.0
Գորիս								78.0	670.0	380.0
Կապան								78.0	1000.0	380.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	1240,0	78.0	990.0	290.0
Վայք								78.0	1000.0	210.0
Տավուշի մարզ										
Իջևան								78.0	1600.0	380.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0

Պետք է նշել, որ Երևան քաղաքում 2003թ. փետրվարին գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի անհատույց տրամադրման 4 գործարքներ:

2003թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 405 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.0%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 45.7%-ի իրականացվել են իրավաբանական

անձանց կողմից: 2002թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 9.2%-ով, իսկ 2003թ. հունվարի համեմատ՝ 23.1%-ով:

2003թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 29 բնակարանների, 11 բնակելի տների, 83 հասարակական ու 13 արտադրական նշանակության օբյեկտների, 1 ավտոտնակի և 268 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. փետրվարին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 93 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. փետրվարի համեմատ, աճել է 3.2 անգամ, իսկ 2003թ. փետրվարի համեմատ՝ 45.3%-ով:

2003թ. փետրվարին, հանրապետությունում վարձակալվել են 3239.92 հա ընդհանուր մակերեսով հողեր, որից 71.56 հա Երևանում: Մարզերում, բացառությամբ Երևանը, վարձակալված հողերից 3162.52 հա հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /որից 10.13 հա նախկինում պահուստային/, 2.28 հա՝ բնակավայրերի, 3.55 հա՝ արդյունաբերական օբյեկտների հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. փետրվարին մարզերի համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող</i>	
	<i>Վարձակալության և գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	15	22.52
Արարատ	10	1877.00	5	6.12
Արմավիր	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	1	10.00	66	960.35
Լոռի	0	0.00	6	9.23
Կոտայք	0	0.00	8	40.60
Շիրակ	0	0.00	11	212.00
Սյունիք	0	0.00	5	22.56
Վայոց Ձոր	0	0.00	3	2.15
Վավուշ	0	0.00	0	0.00
Ընդամենը	11	1887.00	119	1275.53

2003թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 287 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2003թ. հունվարի համեմատ, աճել է 84.0%-ով, իսկ 2002թ. փետրվարի համեմատ՝ 88.8%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 34.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /36.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /17.1%/, առանձնատների /16.0%/ և հողերի /25.8%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 141 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների

քանակը, 2002թ. փետրվարի համեմատ, աճել է 60.2%-ով, իսկ 2003թ. հունվարի համեմատ՝ 54.9%-ով:

2003թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 48.98 հա մակերեսով հողեր, որից 48.96 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 22.13 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2003թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 24 և 11 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.8 %:

2003թ. հունվարի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 59.1%-ով, իսկ 2002թ. փետրվարի համեմատ՝ 6.1%-ով: 2003թ. փետրվարին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափերն արձանագրվել են Երևանում, Արարատի, Շիրակի, և Վայոց Ձորի մարզերում՝ 14.3-ական %, /2003թ. հունվարին Լոռվա մարզում՝ 18.2%/:

2003թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 609 գործարքներ, որոնց քանակը 2003թ. հունվարի համեմատ աճել է 25.1%-ով, իսկ 2002թ. փետրվարի համեմատ՝ 19.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.5%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /41.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն